ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 05-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 05-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

	Կողմ (21)	Դեմ (0)	Ձեռնպահ(0)
Ս. Բալասանյան			
Ա. Ադամյան			
Հ. Կարապետյան			
Լ. Խաչատրյան			
Է. Մկրտչյան			
Տ.Հովհաննիսյան			
Մ. Սահակյան			
Լ. Սանոյան			
Վ. Եդիգարյան			
Ա. Գրիգորյան			
Վ. Հունանյան			
Գ. Սարգսյան			

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Ա. Առաքելյան _____

Հ. Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2017թվականի հունիսի 05-ի N 59-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

05 հունիսի 2017 թվական, սկիզբը՝ ժ. 11:00

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 05-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 217-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ
հարակից զեկուցողներ՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ,Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ,
Ա.ՄԿՐՏՉՅԱՆ,Հ,ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ (ՎԵՐՆԻՍԱԺՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 218-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի N 38-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

6. «ԱՌՏ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

7. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԱՅՐԻԿԻՍ» ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 18 (ՏԱՍՆՈՒԹ) ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

9. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 120 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻԱՆԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «Ա.ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4-ՐԴ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԸ «ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ)

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ
հարակից զեկուցող՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ)

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 05-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ. ՄԱՆԱՍՅԱՆ)

16. 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ)

17. 2016-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ)

18. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

20. ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՓԱՆՈՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 26/7ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

21. «ԷԼԵԿՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐԻ-ԷԼԵԿՏՐՈՆ» ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ N 2Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ՝ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 1432,0 (ՄԵԿ ՀԱԶԱՐ ՉՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ) ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՏ-ՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 07-Ի N 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 60-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 217-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 25-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 5-րդ մասի 1-ին պարբերության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների գրությունները (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի մայիսի 19-ին N 8091, մայիսի 22-ին՝ N 8165, մայիսի 24-ին՝ N 8288 թվագրություններով)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2017 թվականի դրույքաչափերը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 202-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 217-Ն որոշման 1-ին կետով սահմանված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ սույն որոշմամբ Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 217-Ն որոշման մեջ կատարվող փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2017 թվականի հուլիսի 01-ից:

	Կողմ (17)	Դեմ (0)	Ձեռնպահ(4)
Ս. Բալասանյան			Ս.Մարտիրոսյան
Ա. Ադամյան			Հ.Եղիազարյան
Հ. Կարապետյան			Ա.Առաքելյան
Լ. Խաչատրյան			Հ.Պողոսյան
Է. Մկրտչյան			

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2017 թվական N 61-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ(ՎԵՐՆԻՍԱԺՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Գյումրի համայնքի վարչական տարածքում տոնավաճառներ (վերնիսաժներ) կազմակերպելու և դրանց մասնակցելու կարգը՝ համաձայն հավելվածի:

	Կողմ (17)	Դեմ (0)	Ձեռնպահ (4)
Ս. Բալասանյան			Ս. Մարտիրոսյան
Ա. Ադամյան			Հ. Եղիազարյան
Հ. Կարապետյան			Ա. Առաքելյան
Լ. Խաչատրյան			Հ. Պողոսյան
Է. Մկրտչյան			
Տ.Հովհաննիսյան			
Մ. Սահակյան			
Լ. Սանոյան			
Վ. Եդիգարյան			
Ա. Գրիգորյան			
Վ. Հունանյան			

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Տոնոյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«05» հունիսի 2017 թ.

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2017թվականի հունիսի 05-ի
N 61-Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՈՆԱՎԱՃԱՌՆԵՐ (ՎԵՐՆԻՍԱԺՆԵՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գյումրի համայնքում տոնավաճառ (վերնիսաժ) կազմակերպում է Գյումրու համայնքապետարանը՝ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված տոնական օրերին:
2. Գյումրի համայնքում կազմակերպվում են սեզոնային, տոնական, մասնագիտացված, գյուղատնտեսական, ունիվերսալ և այլ տեսակի տոնավաճառներ:

II.ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

3. Տոնավաճառ կազմակերպելու մասին որոշմամբ սահմանվում են.
ա) տոնավաճառի տեսակը, գտնվելու հասցեն,
բ) սկսելու և ավարտելու օրերը, աշխատանքի ժամերը,
գ) տոնավաճառին մասնակցելու համար դիմելու ժամկետները,
դ) տոնավաճառին մասնակցելու թույլտվության ձևը, հայտերի ներկայացման և թույլտվության ստացման կարգը,
ե) տոնավաճառի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցառումներն ու դրանց իրականացման պատասխանատուները:
4. Տոնավաճառ անցկացնելու մասին Գյումրի համայնքի ղեկավարի որոշման վերաբերյալ հայտարարությունը տեղադրվում է Գյումրու համայնքապետարանի կայքում տոնավաճառ կազմակերպելու օրվանից առնվազն 15 օր առաջ:
5. Տոնավաճառ կազմակերպելու մասին Գյումրի համայնքի ղեկավարի որոշման վերաբերյալ դրա անցկացումից առնվազն մեկ շաբաթ առաջ գրավոր տեղեկացվում են ՀՀ Ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի և Կումայրի բաժինները, ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու տարածքային հարկային տեսչությունը, ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Շիրակի մարզային կենտրոնը, ՀՀ Շիրակի մարզի փրկարարական վարչությունը, իսկ կախված տոնավաճառի բնույթից, նաև այլ պետական կառավարման մարմինները:
6. Գյումրու համայնքապետարանի (այսուհետ՝ կազմակերպիչ) կողմից տոնավաճառի մուտքի (մուտքերի) մոտ (բացօթյա տոնավաճառի դեպքում՝ այն մասերում, որտեղից որպես կանոն սպասվում է այցելուների առավելագույն հոսք) փակցվում է ցուցանակ՝ տոնավաճառի անվանման և անցկացման օրերի, ժամերի, կազմակերպչի հեռախոսահամարների վերաբերյալ:
7. Կազմակերպիչը ապահովում է տարածքում աղբամանների առկայությունը, իսկ օրվա ավարտին՝ աղբահանության կազմակերպումը, ինչպես նաև ժամանակավոր զուգարանների տեղադրումը:
8. Կազմակերպիչն ապահովում է իր ներկայացուցչի մասնակցությունը տոնավաճառի գործունեության ամբողջ ընթացքում: Կազմակերպչի ներկայացուցիչը՝
ա) ըստ կազմակերպչի կողմից տրված թույլտվությունների կամ ներկայացված հայտերի

հիման վրա կազմված ցուցակների գրանցում է տոնավաճառի մասնակիցներին,
բ) կատարում է մեքենաների, վաճառակետերի բաշխումը մասնակիցների միջև,
գ) հետևում է տարածքի մաքրման աշխատանքներին,
դ) կատարում է օրենքով, սույն կարգով և տոնավաճառ կազմակերպելու մասին Գյումրու համայնքի ղեկավարի որոշմամբ նախատեսված այլ գործողություններ,
ե) համագործակցում է տարածքի անվտանգությունը և հասարակական կարգը պահպանող մարմինների հետ:

III. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏՈՆԱՎԱՃԱՌԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Համայնքում կազմակերպված տոնավաճառում մասնակցելու համար անհրաժեշտ է առնվազն 3 օր առաջ հայտ ներկայացնել Գյումրու համայնքապետարան:
10. Հայտին կից ներկայացվում են տվյալներ վաճառվող ապրանքի մասին, ինչպես նաև՝
ա) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճենը,
բ) անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը:
11. Հայտատուին տրամադրվում է տոնավաճառի մասնակցի թույլտվություն, որի ձևը սահմանվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
12. Տոնավաճառին մասնակցելու համար ֆիզիկական անձիք, անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները Գյումրու համայնքապետարան կարող են դիմել նաև էլ. փոստի միջոցով:
13. Անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ թերի ներկայացնելու դեպքում, ինչպես նաև, եթե հայտին կից նշված ապրանքի մասին տվյալները չեն համապատասխանում նախատեսված տոնավաճառի տեսակի հետ, թույլտվություն չի տրամադրվում:
14. Թույլտվություն ստացած անձինք տոնավաճառին մասնակցելու համար ներկայանում են տոնավաճառը սկսելուց առնվազն 2 ժամ առաջ, գրանցվում և ստանում իրենց վաճառատեղերը:
15. Գրանցվելուց մասնակիցը պետք է իր մոտ ունենա Գյումրու համայնքապետարանի տրված թույլտվությունը անձնագրի/պետական գրանցման վկայականի պատճեները,իսկ կազմակերպությունների ապրանքը վաճառողները ՝ նաև լիազորագիր:
16. ՀՀ իրավական ակտերի և սույն կարգի խախտման դեպքում մասնակցին կարող է արգելվել մասնակցել տոնավաճառին:

IV.ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Տոնավաճառի մասնակիցը մասնակցության իրավունքը չի կարող փոխանցել այլ անձի:
18. Տոնավաճառի մասնակիցը՝ վաճառքի վայրում՝ չի կարող փոփոխություն կատարել (փոխել սեղանների դասավորվածությունը և այլն) առանց կազմակերպչի թույլտվության:
19. Մասնակիցը պարտավոր է տոնավաճառը ավարտվելուց հետո մաքրել իրեն հատկացված վաճառատեղը, աղբը և մնացած ապրանքը հանել ու տարածքը բերել նախկին տեսքի:
20. Տոնավաճառում առևտուր իրականացնելիս մասնակիցը պետք է ապրանքի վրա փակցնի համապատասխան գնապիտակներ:
21. Վաճառողը առևտուրն իրականացնում է ՀՀ իրավական ակտերի և սույն կարգի հիման վրա: